

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.Ի

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՔԱՐՈԶԸ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՀԱՐԷՆ

«Ծնաւ նոր արայ ի Բեթղեհէմ փաղափ»:

Սիրելի հաւասացեալ զաւակներ Մեր,

Այսօր, մեր հոգիները վերստին լուսաւորոււմ են ու ջերմանում Բրիստոլի Սուրբ Ծննդեան աւետիսով: Այս լոյսն ու ջերմութիւնը չեն գալիս երկրնից նառագայթող արեւից, այլ երկնի բարձունքներից իջած, մեր հոգիներում նառագայթող «արդարութեան արեգակից», այն արեգակից, որ երկու հազար տարիներ առաջ ծագեց Բեթղեհէմի մտորից, երբ Աստուծոյ խօսքը մարմին առաւ եւ բնակուեց մեր մէջ (Յովհ. Ա. 14):

Բանն Աստուծոյ, Որդին Աստուծոյ Յիսուս, աշխարհ իջաւ բերելու համար մեծ աւետիսը՝ թէ Ինք գալիս է հիմը դնելու խաղաղութեան թագաւորութեան, ուր մարդիկ միայն բարիք պիտի կամենան մէկը միւսին, ու նրանք իրենց սրերից եւ նիզակներից սրօրներ եւ մանգաղներ պիտի ձուլեն, եւ այլ եւս ոչ մի ազգ ուրիշ ազգի վրայ պիտի չյարձակուի պատերազմելու համար:

Եւ իբրեւ Յիսուս Իր կեանքով, Իր փառքով եւ փառքով, Իր հրաշք արարներով նախագծեց մարդկութեան առաջ, պատկերը Աստուծոյ արայութեան, պատկերը՝ խաղաղութեան, արդարութեան եւ մարդասիրութեան մի աշխարհի, եւ որպէս գերագոյն առհաւաստեայ, Իր կեանքը զոհեց խաչի վրայ, մարդկանց մեղքերի համար, Իր սուրբ արեան շաղախով ամրացնելով նիւքերը Իր թագաւորութեան:

Խաղաղութեան եւ արդարութեան աւետարներ են եղել նաեւ այլ կրօնների հիմնադիրներ, նաեւ շատ իմաստուններ ու փիլիսոփաներ, Սոկրատեսից մինչեւ Էմմանուէլ Քամբ եւ մինչեւ մեր օրեր:

Օրինակ, հաճելի է Մեզ յիշել անցեալ դարի մեծամասն փիլիսոփաներից Հէրպերթ Սփէնսերի հետեւեալ մարգարէութիւնը.

«Ընկերային այլապիտական բարոյականութիւնը իր կատարելութեան պիտի հասնի աշխարհի վրայ այն ժամանակ, երբ մարդիկ իրենց ամէնօրեայ պահանջը նկատեն մտահոգութիւնը իրենց նմանների երջանկութեան»:

Մեծ բանաստեղծներ, արուեստի ու գիտութեան մարդիկ, տեսիք ունեցող յեղափոխական գործիչներ, նոյնպէս գովեցել են ու երգել՝ խաղաղ ու արդար յարաբերութիւնների ստեղծում մարդկանց եւ ժողովուրդների միջեւ:

Ինչպէս բարոյական վեհութիւն կայ օրինակ՝ անցեալ դարի Ֆրանսացի բանաստեղծ Լամարթինի հետեւեալ խօսքերի մէջ.

«Տկարների ազատութիւնը ուժեղների փառքն է հանդիսանում»:

Եւ ինչքան հոգեւոր է մեր նահասակ բանաստեղծ Դանիէլ Վարուժանի մարդասիրական տեսիլը.

«Արեւելեան կողմն աշխարհի խաղաղութիւն թող ըլլայ...

«Ոչ արիւններ, ֆրսիմ հոսին լայն երակին մէջ ակօսին.

«Աւ երբ հնչէ կոչնակն ամէն գիւղակի, օրհներգութիւն թող ըլլայ»:

Այս բոլորով հանդերձ սակայն, Մենք գաղմութեամբ պէտք է խոստովանինք թէ մեր օրերում էլ մարդկանց ընկերային եւ միջազգային կեանքում դրսեւորում են ու գործում՝ խաղաղ ու արդար յարաբերութիւններ արգելափակող, խաբարող ուժեր, եսակեդրոն մղումներ, ինչպիսիք են յատկապէս՝ տիրապետելու կիրքը եւ հարստութիւն դիզելու տենչը: Ինքը Յիսուս եւ Իր մեծ առաքելը Պօղոս, խորաթափանց կերպով մասնակից են արել այդ երկու բունաւոր արմատները եւ պատգամել են բոլոր ժամանակների մարդկանց.

«Ով կամենայ ձեր մէջ առաջինը լինել, նա թող բոլորին լինի սպասաւոր» (Մարկոս Ժ. 44) եւ «Աւժաթսիրութիւնն է մայրը ամենայն չարեաց» (Ա. Տիմ. 2. 10):

Քրիստոսի հոգին կրող սուրբ մարդիկ, բազում անգամներ նոյն այս պատգամներն են փարօղել իրենց ժամանակակիցներին: Մեր Մայր Եկեղեցին, Հայաստանեայց Եկեղեցին, նոյնպէս միշտ երազել է ու աղօթել, որ երկրի վրայ կեանքի կոչուեն այս մարդասիրական պատգամները, որ վերջ գտնեն բռնութիւններն ու հարստահարութիւնները օտար տիրակալների, որոնց նիւանների մէջ տառապում եւ արիւնաբան էր լինում հայ ժողովուրդը, դարեր ու դարեր շարունակ:

Մեր օրերին, Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ահաւոր փորձութիւնից յետոյ, թէեւ ժողովուրդներն ու պետութիւնները գերագոյն ճիգեր են ի գործ դնում որպէսզի այլեւս չկրկնուեն նման ողբերգութիւններ, սակայն տակաւին անորոշ է ապագան եւ առկայ են աշխարհի խաղաղութեան սպառնացող խմորումներ:

Սիրելի հաւասացեալներ, այս սուրբ պահին, երբ Մենք աւետում ենք հրաշալի Ծնունդը եւ Յայտնութիւնը խաղաղութեան իշխան Յիսուսի Քրիստոսի, միացնենք մեր մտածումներն ու մեր երազանքները եւ սրտեղանդն աղօթենք, որ աշխարհը համայն եւ ազգութիւնները բոլոր հեռու պահուեն պատերազմների արհաւիրքներից ու տառապանքներից, որ պետութեանց պատասխանատու առաջնորդները ամէն տեսակ կացութեանց առաջ կանգնած՝ մտածեն խաղաղութեան պահպանման մասին, արդարութեամբ լուծելու համար բոլոր միջազգային հարցերը:

Յիսեմք այստեղ Յակովբոս առաքելի պատգամը որ այնքան այժմեական է հնչում, թէ՛

«Արդարութեան պտուղը խաղաղութեամբ է սերմանում նրանց ովքեր խաղաղութիւն են անում» (Յակ. Գ. 18):

ԱՍԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԲ ՀՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

ԲԵԹՂԵՀԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ

ԺՄԼՈՎՈՒՐԻ ՀԱՅՈՑ ՈՐ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Կը խօսիմ ձեզի նորէն աշխարհի ամենամուխրական սրբալայրէն, Բեթղեհէմի մեր Տիրոջ Ծննդեան Այրէն, փոխանցելու քաղցր աւետիսը այս գիշերուան, որ մօտ երկու հազար տարիներ առաջ աշխարհին տուեցաւ, հրեշտակներու եւ հովիւներու բերնով, Ծննդեան բոցավառ առջին ներքեւ:

Յիսուսի Ծնունդը սրտառույզ դրօշագ մը չէ միայն, անիկա անսփոյ նշանաւորութիւնն է, մերկ մանուկի մը կերպարանով պառկած մաւրին խորը:

Յիսուս Աստուծոյ խօսքն էր՝ երկինէն երկիր իջած, կ'ըսէ Յովհաննէս Աւետարանիչը, որպէսզի մարդիկ կարենային լսել Իր ձայնը եւ տեսնել Իր

Խաղաղութեան պատգամները եւ կոչերը մասնաւոր ջերմութեամբ ընկալուիմ են մեր Մայր Եկեղեցու եւ ժողովրդի կողմից, որոնք ահաւոր չափերով տառապել ու զոհուել են պատերազմների ընթացքում, մանաւանդ Առաջին Համաշխարհային Պատերազմի 1915-16 տարիներին, երբ Օսմանեան ցեղասպանները բնաջինջ արեցին Արեւմտահայաստանի շուրջ երկու միլիոն խաղաղ ու անզէն հայ ազգաբնակչութիւնը:

Հայ Եկեղեցին ու հայ ժողովուրդը երբեք չեն ցանկանայ, որ նման ողբերգութիւններ կրկնուեն յետ այսու որեւէ տեղ աշխարհի վրայ, որեւէ ժողովուրդի կեանքում:

Թող ազգութիւնների խաղաղ գոյակցութիւնը եւ համերաշխ գործակցութիւնը անխախտ կանոնը դառնայ միջազգային օրէնքի եւ կեանքի:

Այսօր, Մենք մխիթարուած ենք, որ եղբայր ժողովուրդների կողմին, մեր ժողովուրդը եւս իր խաղաղ, ապահով ու յառաջագնաց կեանքը բարունակում է ապրել նոյն արեւի ու դրօշի ներքոյ, ինչպէս նա ապրեց ու անց վերջին վաթսուս տարիների ընթացքում, իբրեւ մեռելներից յարութիւն առած, վերածնունդ ժողովուրդ, որ կ'երթում է իր նոր ապագան, իր հառազան Մայր Հայրենիքում:

Ամէն բանից վեր է՝ մեզ հայերիս համար խաղաղութիւնը եւ անվտանգութիւնը մեր վերածնունդ երկրի: Ով այս աշխարհի վրայ մի հայրենիք ունի եւ սիրում է նրան, նա կը հասկնայ մեզ՝ Հայաստանցիներին:

Աւելի լոյս, աւելի սէր եւ աւելի խաղաղութիւն համայն մարդկութեան: Աւելի լոյս, աւելի սէր եւ աւելի խաղաղութիւն մեր ժողովուրդին որ ի Հայաստան եւ որ ի սփիւռս աշխարհի:

Եւ շնորհ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն: